

1479

Задания

и способы преподавания

22
—
2 - 20

| 896

ՀԱՄԱՊՈՏ

(48)

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍՊԱՀԱՅ ԿՊԱՅ



Ի ՊԵՏՈՎԱՐԺԱՐՈՒՆԱՅ ԵՒ ԸՆՏԱՆԵԱՅ

— Հ Ր Զ Ա Ն Ա . —

Թարգմանեց Անդրեաս Հակոբի

Բ. Ա. Ա Ր Ա. Հ Ա. Ա Ր Ա. Ա



ՏՊԱՐԱՆ

Յ. Մ Ա Տ Թ Ե Պ Ա Ն Ո Ւ

Թիւ 27, Ֆինանսնար եօդուշու, Կ. Պողիս

1896

22

- 20

2010

22
2-20

ՀԱՄԱՊՈՏ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍԱԿՐԵ ԶՅՈՒՑ



ի ՊԵՏՍ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ ԵՒ ԸՆՏԱՆԵԱՅ

Թարգմանեց Ռազմական

Բ. Ա. Բ. Ա. Հ. Ա. Ա. Ե. Ա. Ե.



Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԵՈՍՆԱՆ

1896

ՏՊԱՐԱՆ, ՎԻՄԱԳՐԱՑՈՒՆ, ԿԱԶՄԱՑՈՒՆ ԵՒ ԹՂԹՎԱԿԱՌԱՆՆՈՅՑ

6. ՄԱՏԹԵՎՈՍԵԱՆ

27. Յինանըլար եօպւու, Կ. Պոլիս:

2001



39174-67

معارف عمومیه ناظرات حاصله سنک رخصتنامه سیله طبع او لمنشدر

Բաղմակաստակ աշխատութենէ եւ մեծամեծ զոհո-
ղութիւններէ վերջ կարող եղայ վերջապէս թարգմանել
ՀԱՄԱԾԱՅ ԱՇԽԱՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՍՈՂԻՐԲ ԳՐՈՅ անուն այս
մատենիկ՝ զոր կ'ուղեմ մաս առ մաս ի ըստ ընծայել, սա
միակ խորհրդով թէ իւր պարզութեամբն ու համառօ-
տութեամբ պիտի կարենայ կարեւոր պակաս մը ընուշ,
ինչ ինչ օգուաններ ընծայելով գործածող մէն մի անհա-
տին : Արդարեւ մեր մէջ նուազ թիւ մը չ'են կազմեր
համանուն բայց այլասեռ գրեանք, որոց ամենքն ալ ու-
նին իրենց կատարելիք ուրոյն դերն, եւ որոց կարգին
կը միանայ սոյն թարգմանածոյ մատենիկս :

Պատուարժան ուսանողք կարելի է երբեմն բազմին
սխալներու, սակայն ներողամտութեամբ անցնելին կը
խնդրեմ, զի չէի կրնար ասկէ աւելի կոկիկ ձեւ մը տալ
անոր քանի որ սուզ է ժամանակս եւ անգին ժամերս։
Այսու ամենայնիւ կը խօստանամ երկրորդ տպագրուա-
թեան մէջ (Եթէ հարկ ըլլայ) փոփոխութիւններ ներմու-
ծել թէ՛ ոճի եւ թէ՛ ձեւի մասին։

Աշխարհագրութիւնս կը բաղկանայ չորս զրջաններէ՝
որոց առաջինը կը խօսի Պաղեստինու , անոր լերանց ,
գաշտերուն եւ հովիտներուն . գետերուն , լիճերուն ,
աւազաններուն եւ աղբարձրներուն վրայ . երկրորդը կը
պարունակէ բաժանումներն , իսկ մասցեալ երկուքը կը

52539-L.H.

Նկարագրեն Հին եւ Նոր Կտակարանաց մէջ յիշուած եր-
կիրներն՝ պատմելով հանդերձ այլ եւ այլ տեղեր պա-
տահած դէպքերը :

Իմ մեծագոյն դժուարութիւնս եղած է Անգլիերէն
անուանաց Հայերէնը գտնելն, որոյ համար նուիրած աշ-
խատանքս ապարդիւն ելած չ'յուսամ :

Վստահելով որ իմ այս առաջին թարգմանութիւնս
պիտի կարենայ ըստ արժանեաց սիրալիր ընդունելու-
թիւն գտնել հանրութեան առջեւ, չերժապէս կ'ազդա-
րարեմ որ Սուրբ Գրոց մէն մի ընթերցող գէթ մէկ օրի-
նակ առնէ ասկէ իրը օժանդակ կենաց Մատենին : Մա-
նաւանդ փափաքելի է որ իրեւ դասագիրք մը գոր-
ծածուի վարժարանաց մէջ :

Գրքիս մէջ գործածուած «Ն. Ք.» տառերը պէտք է
կարդալ «Նախ քան զՔրիստոս» . ինչպէս նաեւ «Յ. Ք.»
տառերը՝ «Յամին Տեառն» կամ «Յետ Քրիստոսի» :

«Այս գիրքն ալ քննեցէ՛ք» :

Բ. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ



ՀԱՄԱՌՈՑ

ԱՃԻԱՐՅԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

ԵՐԶԱՆ Ա.

ՊԱՂԵՍՏԻՆ

ՅԻԶԻՔԱԿԱՆ ԵՒ ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ

Ա. — ԱՆՈՒԱՆՔ ԵՐԿՐԻՆ

Պաղեստինու գլխաւոր անուններն են .

1. Քանան . — Այսպէս կը կոչուի Քամի կըստ-
աերագոյն որդւոյն՝ Քանանի անուամբ որ հոն հաս-
տառուեցաւ Բաքելոնի խառնակութենէն վերջ .
Ծննդ. Ժ 15. ԺԲ 5 :

2. Ուխտի կամ Ուխտեալ Երկիր . — Այս ա-
նուն տրուած է անոր այն ուխտին համար զոր

Աստուած ըրաւ Աբրահամի, թէ իւր սերունդը պիտի ժառանգէր զայն . Ծննդ. ԺԲ 7. ԺԵ 18.

3. Երայեցլոց Երկիրը. — Այս անուամբ կը կոչուի զայն ստացող ժողովուրդէն . Ծննդ. Ե 15 : Նոքա Եբրայեցի կը կոչուէին յԵբերէ՝ Աբրահամի մէկ նախահօրմէն (Ծննդ. Ժ 24), կամ թերեւս Միջագետէն երկրին մէջ հաստատուելու նպատակաւ Եփրատէ անցնելուն համար :

4. Խարայէլի Երկիր . — Սա ընծայուած է Յաւ կոքայ սերնդեան բնակութենէն՝ որ Խարայէլ եւս կը կոչուէր :

5. Պաղեստին . — Փղշտացիներէն առնուած անուն մը՝ որոնք Միջերկրական ծովուն մէկ սահմանագլխոյն վրայ բնակեցան երկրին հարաւային արեւմտեան կողմը : Այս է առ հասարակ դործածական անունը . Եւ. ԺԵ 14:

6. Սուրբ Երկիր . — Այս անուն միայն մէկ անդամ յիշուած էր Սբ. Գրոց մէջ . բայց հիմա բազմիցս կրկնուած է այն երկրին հետ միացած նուիրական ընկերութեանց համար . Զաք. Բ 12:

Դործածուած են նաև Եհովայի, Ասոււծոյ և Յուդայի Երկիր անուններն, սակայն ասոնք հազուագէպ են :

Բ. — Դիրք, ՍՍՀՄԱՆ ԵՒ ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆ

Պաղեստին Միջերկրական ծովուն արեւելեան

ծայրին վրայ հաստատուած երկրի անձուկ սահման մ'է և կը դրաւէ Սիւրիոյ թրքական նահանգին հարաւային արեւմտեան մասը :

Բուն Պաղեստին, կամ, ի բնէ Հրէից ժառանգութիւն ճանչուած երկիրը, իւր արեւելեան կողմը ունէր Յորդանան գետը, բայց երբ Խարայէլացոց ստուար բազմութիւն մը հաստատուեցաւ արեւելեան կողմը, յայնժամ երկիրը դրաւուելով նկատուեցաւ Ուկստեալ երկրին մէկ բաժինը՝ որ նոյն անունին տակ պարփակեցաւ :

Պաղեստին ընդհանրապէս նկատուած է շըրջապատեալ հիւսիսէն Լիբանան լեռներով և Փիւնիկէի սահմանագլխով. արեւմուտքէն՝ Միջերկրական ծովով. հարաւէն՝ Սպառած Արաբիայով, և արեւելքէն՝ Սիւրիոյ և Արաբիոյ անապատներով⁽¹⁾:

Ունի 180 մղոն երկայնութիւն՝ իբր 63 մղոն միջին լայնութեամբ, և կը պարունակէ մակերեւոյթ մը՝ որ հաշուի 11,000 քառակուսի մղոն : Կը տարածուի 30° 40° էն 33° 30' հիւսիսային լայնութեան, և 34° էն 36° 20' արեւելեան երկայնութեան մէջ :

(1) Դասթի եւ Սողոմոնի ժամանակ Հրէից ազգերը տարածուեցան աւելի ընդարձակ մասի մը մէջ քան ՚ի վերոյ նշանակեալ սահմաններն որոնք կը գրկեն Սիւրիոյ եւ Արաբիոյ մեծագոյն մասերն . ցեղերու բառումք կը կառավարուին այն իշխաններով՝ որք կը բնակէին իրենց բուն երկրին մէջ եւ մշտնչենապէս միացած չէին Պաղեստինու :

Գ. — ԵՐԿՐԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՐՔԸ

Պաղեստին հաստատապէս նկատուած է իրրե բլուրներու և հովիտներու երկիր մը. Օր. ԺԱ. 11. Իւր ամբողջ երկայնութեան մէջ հիւսիսէն հարաւ տարածուող բլուրներու կրկնակ շղթաներ կան՝ որոնք ծագում կ'առնեն Լիբանան և Անդի-Լիբանան լեռներէն և զուգահեռական կ'ընթանան Յորդանանու հանդիպակաց կողմերուն վրայ մինչեւ որ կը համնին Քորերի և Սինայի բարձանց յԱպառաժ Արաբիա :

Բազմաթիւ կողմնակի գագաթներ կը բաժնուին այս շարքերէն . բայց ոչ միօրինակ ուղղութեամբ մը : Երկրին հիւսիսային մասին մէջ բլուրք ընդհանրապէս ծածկուած են գալարներով մինչ ի գագաթն , և բովանդակ երկրին գիրքը այլայլած է ու գեղեցիկ : Հարաւային ու հարաւարեւելեան կողմը , մասնաւորաբար Մեռեալ ծովու մերձաւորութեամբ , լեռներու երեւոյթը տեղոյն և ամսայի է : Քանանու լերանց շատերը կը բարձրանան նշանաւոր գագաթներու : Սոյն խորհրդածութեան միակ գերազանց օրինակն է Հերմոն լեռն Յորդանանու արեւելեան կողմը , որ ծովուն մակերեւոյթէն 11,000 ոսք վեր կը բարձրանայ :

Լեռներու մէջ սփռուած են բազում գաշտավայրեր և հովիտներ՝ յորոց ոմանք յորդառատ են

գալարներով և ճոխ գաշտանկարներով . մինչ այլք չոր են և անջրդի : Սոյց նշանաւոր օրինակներ են Յեզրայէլի գաշտն ի Գալիլիա՝ որ ծածկուած է ամենաընտիր արօտներով . Յորդանանու Հովիտն՝ որոյ օդը վատառողջ և հողը անքերի է :

Պաղեստինու մէջ գլխաւոր զառիթափը կը հակի դէպ ՚ի Միջերկրական ծովս , յորում շատ մը փոքրիկ առուակներ կը հոսին ներքին բարձունքներէն : Երկրին անուանի գետն է Յորդանան՝ որ հիւսիսէն հարաւ կ'ընթանայ գրեթէ իր ամբողջ լայնութեան մէջ : Իւր ուղղութեան հիւսիսային մասին մէջ Յորդանան երկու փոքրիկ լիճեր կը կազմէ՝ իւրաքանչիւրը շրջապատեալ շքեղ տեսարաններով և արգասաւոր հողով : Հարաւային կողմը կը գտնուի Մեռեալ ծովս ուր կը թափի : Այս լճին և շրջակայ երկրաց գիրքը զարմանալի հակապատկերն է այլոց գիրքին :

Պաղեստինու ընդհանուր գիրքը կանխագոյն ժամանակաց մէջ աւելի հրապուրիչ եղած է քան որ այժմ է : Իւր նախկին երեւոյթի մասին եղած մէն մի նկարագրութիւն հաւատալ կ'ուտայ թէ նշանաւոր երկիր մ'եր այն թէ բնական գեղեցկութեան և թէ երկրագործութեան արդեանց մասին :

Դ. — Լ Ե Ր Ի Ն Ք

Պաղեստինու երկու լեռնաշղթայից գլխաւոր գագաթներն են . —

1. Արաբանան Լերինք

Յարեւմուս Յորդանանու

- | | |
|------------------|---------------------------|
| 2. Պէյթիթիւդ լեռ | 5. Կիլպօս լեռ |
| 3. Կարմելոս լեռ | 6. Երաղ եւ Քարիղին լերինք |
| 4. Թափոր լեռ | 7. Ջիթենեաց լեռ |
| | 8. Դորանթանայի լեռ |

Յարեւելս Յորդանանու

- | | |
|---------------|-------------------|
| 9. Հերմոն լեռ | 11. Դաղայոդ լեռ |
| 10. Բասան լեռ | 12. Արարիմ լերինք |

1. Արաբան (ապիտակ) պարփակելով Արաբանան և Անդի-Արաբանան կրկնակ շղթայներն , կը կազմէ լերան ահագին գօտոյ մը մասն՝ որ կը յառաջանայ Սիրիոյ ամբողջ երկայնութեան մէջ հիւսիսէն ի հարաւ և Պաղեստինու հիւսիսային սահմանն կը նկատուէր :

Եղթային ամենէն բարձր մասն է Արաբանան՝ որոյ գագաթ ծածկուած է մշտնջենաւոր ձեամբ : Իւր կազմութեան ապառաժը կրային և ճերմակի մօտ գոյնով քար մ'է շատ մասերու մէջ առատ երկաթով զոր կը գործածեն բնակիչք : Սողոմոնի

տաճարին շինութեան համար պէտք եղած քարն ու ատաղձ այս լեռներէն բերուած են . քանի մը հին եղեւնիի ծառեր կը գտնուին դեռ անոնց վրայ և կըսուի թէ գոյութիւն ունէին մինչև այն վեհագետին օրերը . Ա. Մնաց. Ե 13-18 : Արաբանան սրբազն գրողներու հանապազօրեայ քերթողական ակնարկութեան առարկայն եղած է . Երգ. Դ 8. Ես. Խ 16 :

2. Պէյթիթիւդ լեռը Գալիլեայի գաշտէն ենող երկու գագաթներէ կը բաղկանայ :

Ասոնց միոյն վրայ ըստ աւանդութեան , Քրիստոս արտասանեց վրայ Հունականութեան ծանօթ ճառ մը . Մատթ. Ե 1 : Նոքա այժմ Արաբացիներէն կը կոչուին Քուրէն Հաննին :

3. Կարմելոս վեց կամ ութ մղոն ի ներքս տարածուող բլուրներու գօտի մ'է . Ակրոն (Acre) խորշէն գէպ հարաւային արեւելեան ուղղութեամբ :

Մասնաւոր բարձրութիւնն՝ որուն ընդհանրապէս յարմարցուած է անունը , ծովեզին վրայ ժպիլհ հրուանդան մ'է իրը 1500 սոտք բարձր : Կը բաղկանայ գայլախաղով ծածկուած կարծր կրաքարէ : Տակաւին կը մնայ նոյն գեղեցկութեամբ՝ որով Կարմելոս պարտէզներու եւ այգիներու երկիր մը հոչակուած էր վաղեմի ժամանակաց մէջ : Իւր կողերն ու գագաթ սքողեալ են գալարներով և զարդարեալ՝ պէս պէս ծաղիկներով ,

այնպէս զի «Կարմեղոսի վսեմուրիւնն» առակը տակաւին կլնայ գործածուիլ . Ես. լե 2 : Բլոյն հիւսիսային արեւելեան զառիվայրին վրայ մենաստան մը կը կենայ որոյ մերձ ըլլալ կը թուի Բաաղի մարդարէից ընդդիմութեան ատեն՝ իւր պատարագը այրելու համար երկինքէն կրակ կոչած տեղն . Գ. Թագ. ԺԸ : Մի քանի այրեր գտնուած են Կարմեղոսի մէջ՝ որոնք , անտարակոյս , Եղիայի և Եղիսէի հանապազօրեայ ժողովատեղիներն էին . Գ. Թագ. ԺԸ 42 . Դ. Թագ. Բ 25 : Սուրբ Գրոց բանաստեղծական գրուածոց մէջ յաճախակի ակնարկութիւններ եղած են Կարմեղոսի նկատմամբ . Երդ. Ե 5. Ես. լե 2 :

Կարմեղոս փոքրիկ գիւղ մ'էր Յուդայի հարաւային կողմը , Երբոր Նորաղ կ'ասրահատէր իւր ոչխարներն , յորժամ իրեն եկան Դաւթի պատգամաւորներն :

4. Թափոր՝ Կղղիացեալ լեռ մ'է Յեղայելի դաշտին ծայրագոյն արեւելքի մէջ , ծովսն մակերեսէն իրը 1500 ոտք բարձր :

Իւր կազմութիւնը գրեթէ բոլորովին կրային է , և ստորոտէն մինչեւ գագաթը ծածկուած է խոտերով , ծաղիկներով և թուփերով : Մայրը կը կենայ մեծամեծ պատնէներու վլատակներով գոցուած լեռնադաշտ մը : Թափորի վրայ կազմեց Բարակ իւր 40,000 մարդէ բազկացեալ բանակն որ

նախ ելաւ Սիսարայի և անոր բանակին դիմադրելու . Դատ. Դ 6 . և , ըստ հին բայց սխալ աւանդութեան մը , այս լեռան վրայ այլակերպեցաւ Փրկիչն մեր Յիսուս . Ղուկ. Թ 28 : Դրացի Քրիստոնեայք գեռ ծեսեր կը կատարեն ի յիշատակ այն դէպքին : Զարդիս կը կոչուի Ճէպէւ Շուռու :

5. Կիլայօա՝ ստորին բլրաշղթայ մ'է Ասդրաւան (Յեղայէլ) մեծ գաշտին հարաւային կողմը , շքեղապէս բարձրանալով գաշտէն աւելի քան 800 ոտք :

Յառաջագոյն առատ արօտ արտադրեց , բայց հիմա բոլորովին անբերրի է : Այս լեռներուն վրայ տեղի ունեցաւ Խորայելացւոց և Փշտացւոց միջեւ եղած պատերազմ՝ յորում կենակորուստ եղան Սաւուղ և իր որդէքը . Ա. Թագ. Լ. :

6. Եբաղ և Գարիղին՝ Եփրեմի ցեղին հարաւային կողմը հաստատուած կղղիացեալ բլուրներ են :

Ոնոնք իրարմէ անջատեալ են նեղ հովիտով մը , հազիւ մէկ ասպարէղ ընդարձակութեամբ՝ որոյ մէջ կը կենայ Նարզոսի քաղաքը , վաղեմի Սիւքէմը կամ Սիւքարը , և 800 ոտք բարձր են : Եբաղ կը բարձրանայ հովտին հիւսիսային կողմը , իսկ Գարիղին՝ հարաւային կողմը , և երկոքին եւս ժայռուտ են և անպատուղ : Յորդանանէ անցնելէն վերջ Յեսու խորան մը կառոյց Եբաղին վրայ ուր

գրեց օրէնքը . Յես. լ. 30: Այս ատեն բլուրներու մէջ եղող հովտին վրայ կեցած բարձրաձայն կարդաց օրէնքը ժողովրդեան առջեւ — անոնց՝ որ երազի վրայ կանգնած կը փոխարինէին անէծքներուն և անոնց՝ որ Գարեղինի վրայէն կ'արտաքերէին օրհնութիւններն . Օր. իշ 42, 43 . Յես. լ 33: Գարիղինի գագաթէն Յովալթամ արտասանեց իւր առակն Սիրէմի մարդոց , երբոր նորաթագաւոր ըրին զՍրիմէլէք . Գատ. թ. 7: Հոս ալ տաճար մը կանգնեցին Սամարացիք, Երուսաղէմայ տաճարին հետ մրցելու համար , որոյ վասն բընակիչք տակաւին սուրբ կը պահէն այս լեռն :

7. Զիրենեաց լեռը հաստատուած է Երուսաղէմի արեւելեան կողմը : Ունի քառեակ կատարներ՝ որոց բարձրագոյնը 2400 ոտք վերէ ծովան մակերեւոյթէն :

Ամենէն բարձր գագաթը կ'ենէ Գեթսեմանի պարտէզէն՝ ուր , ըստ հին աւանդութեան մը , տեղի ունեցաւ Քրիստոսի համբարձումն : Նուիրական մանրակրկիտ պատմութիւններ զայս դէպք կ'արձանագրեն ի Բեթանիա կամ անոր մօտ տեղ մը պատահած . Ղուկ. իթ 50: Կըսուի թէ այս բարձրացման կէս ճամբան էր ուր մեր Տէրը նստաւ և լացաւ Երուսաղէմի վրայ . Ղուկ. ժթ. 4: Գաւիթ՝ Արխուոլմէ փախած ատեն Զիթենեաց լեռը ելաւ «և կուլար» . Բ. Թագ. ժթ 30: Իւր բարձանց

ստորին և հեռաւորագոյն հարաւակողմն էր այն վայր՝ ուր Սոզոմոն կառուց Քամովի բարձր տեղը Գ. Թագ. ժթ. 7, եւն : Հաւանաբար , այդ պատճառաւ կը կոչուի Ապականութեան լեռ . Գ. Թագ. իթ 43: Անոր հետ կապակցեալ Քրիստոսի կենաց դէպքերն բազմաթիւ են , և ի հոչակումն սորաշատ եկեղեցիներ և այլ յիշատակարաններ հաստատուած էին անոր տարբեր մասանց մէջ՝ յորոց ոմանք գեռ գոյութիւն ունին : Քրիստոսի համբարձման եկեղեցին , ինչպէս նաեւ ուրիշներ , ամեն տարի հազարաւոր այցելուներ կ'ունենան :

8. Գօրանիքանա կարի իմն ամայի բլլաշղթայի մը բարձրագոյնն է Երիքովի մօտ :

Կ'ենթագրուի թէ Քրիստոսի քառասնօրեայ ծոմապահութեան հետեւորդ փորձանաց վայրն է այն . Մատթէ Գ. 4 :

9. Հերմոն Անդի-Լիբանան շղթային վերջաւորութիւնն կը կազմէ ի հարաւոյ : Պաղեստինու մէջ ամենէն բարձր լեռն է սա՝ որ ծովուն մակերեսուն 44,000 ոտք վեր կը բարձրանայ , և մշտնշենական ձիւնով ծած կուած գագաթ մ'ունի :

Քանիանու հիւսիսարեւելեան սահմանն կը նկատուէր այն , Օր. թ. 8, և ոչ թէ Թափոր լեռան մերձակայ փոքր բլրակի մը հետ խառնուած՝ որոյ տրուած է նոյն անունը : Ամորհացիք կը կոչէին զայն Սէնէր , և Սիթոնացիք՝ Սարէծ , որով անգամ

մը յիշուած է ի Սբ. Գիրս, Սաղմ. Իթ. 6, Մովսէս անոր կ'ընծայէ նաեւ Սէճ անունը. Օր. Դ 48: Հաւանական է թէ սոքա Հերմոնի շուրջը գտնուող փոքրիկ բլուրներու անուններն են, և ըստ դիպաց կը ներկայանան փոխանակ ամբողջ շղթային: Հերմոն կյեալ է Թափորի հետ. որպէս կը ներկայացնեն Պաղեստինու բոլոր լեռներն. Սաղմ. Զթ. 12. և նշանաւոր հանդիսացած է իւր կազդուրիչ ցօղերուն համար. Սաղմ. ՃՂԻ 3: Իւր արդի անունն է Ճէպէւել-Շաւ:

10. Բասան՝ (պատառք) բլուրներու շարք մ'է, կամ, աւելի պատշաճ բառերով, Հերմոնի հիւսային կողմէն մինչեւ Յաբրոկ գետոյն հարաւային կողմը տարածուող բլրային երկրի մը որոշ մասն է:

Նշանաւոր է իւր առաւտ արօտին և անդ անուցեալ խաշանց տեսակին համար. Օր. ԼԲ 14, և Ուուրէնի և Գաղի որդիքն և Մանասէի կիսացեղն ընտրած էին զայն իրբեւ ժառանդութիւն ընդ Դաղայող. Թու. ԼԲ 33: Բազմիցս ակնարկուած է Սբ. Գրոց բանաստեղծական մասանց մէջ. Սաղմ. Կը 45. ՃՂԶ 20:

11. Գաղայող՝ արդարեւ բարձրաբերձ բլուրներու փոքր գօտի մ'է Յաբրոկ գետէն սակաւ ինչ հեռի ի հարաւ:

Իւր անուն կառնու քարերու շեղակոյտէ մը զոր Յակոբ դրաւ երբոր Լաբանի հետ դաշնակ-

ցութիւն մը կնքեց Գաղայող անուամբ. Ծննդ. ԼԸ 47. Ուստի Գաղայող կը ներկայացնէ ընդարձակ մաս մը երբեմն հիւսիսէն պարփակելով զբասան՝ որ աւերակ եղաւ իւր արդասաւորութեան և գեղեցիկ աեսարանին համար: Գաղայողի լերանց շատերը ծածկուած էին ծառերով որոցմէ կը հայթայթուէր Սուրբ Գրոց մէջ յիշուած նշանաւոր խէժն Գաղայողի Բաղանա անուամբ. Երեմ. ԽԶ 11: Գաղաաղու շղթայի այժմու անունն է Հեղան:

39/4-67

12. Աբարիմ բարձր ու խորդուբորդ լերանց շարք մ'է որ կ'երկնայ Մեռեալ ծովուն երկայնութեամբ:

Անսիք շատ անբերրի են: Եղթային երկու դագաթներն են Փաք, Փետք կամ Նեքու, որոց վրայ Բաղաամ կառոյց իւր խորաններն ու զոհ մատոյց իրբեւ նախապատրաստութիւն ընդդէմ Խորայէլի արտասանելիք անիծից. Թու. ԻԳ 14, 28: Վերջինէն ամբողջ Քանանը դիտելու թոյլատրեալ էր Մովսէս յառաջ քան իւր մահն. Օր. ԼԲ 49: Երշթային արդի անունն է Եւ-Պէւ, ներով նկատմամբ Յէբէւ Աբենուր կը կոչուի:

ՓՈՔՐ ԲԼՈՒՐՆԵՐ

Սէլա լեռը, Երազի և Գալիպինի մօտ, Սբ. Գրոց մէջ յիշուած է Արքմէլքքի պատմութեան

կապակցութեամբ (Դատ. թ. 48), և նշանաւոր է իւր ձեան սպիտակութեան համար . Սաղմ. կը 44:

Նոյն մերձաւորութիւնն ունի Գառա Բլուր՝ ուր թաղուած է Յեսու . Յես. իդ. 30 :

Բենիամինի ցեղին մէջ է Ռէմոն Վէճը ուր 600 Բենիամինեանք ապաստանեցան Խօրայէլի մնացորդաց հալածանքէն . Դատ. ի 47 :

Սէօն, Մօրէայ և Ալուն կը գտնուէին Երուսաղէմայ պարիսպներուն մէջ : Սոցա առաջինը գրաւուեցաւ միջնաբերդէ մը զոր Դաւիթ առաւ Յերուսացիներէն և գրաւեց զայն իրրե իւր սեփհական քնակարանն . ուստի ստացաւ Դաւիթ Քաղաք անունը . Բ Թագ. Ե 7 :

Սիօն լեռը բազմիցու գործածուած է ի Սր. Գիրս փոխանակ ամբողջ Երուսաղէմայ . Սաղմ. ձլէ 1. Միք. Դ 8 , և Երբեմն եւս մարգարէութեանց մէջ՝ փոխանակ չըէից ազգին . Ես. ԺՈ. 16 : Արքա համ Մօրէայի բլուրն ելաւ զիսահակ իւր որդին , զոհելու նպատակաւ . Ծննդ. իթ 2 , և որոյ վրայ յետոյ կառուցուեցաւ . Սողոմոննեան տաճարը . Բ Մնաց. Գ 1 :

Յուդայի հարաւային արեւելեան կողմը Մեռեալ Ծովուն մօտ է Երեւան Բլուր՝ ուր ժամանակ մը Դաւիթ ապաստանեցաւ Սառողի կատաղութենէն . Ա Թագ. իդ. 19 :

Երեւան , Նորիսոնք . և Յուդայի անուններն , ինչ-

պէս և ուրիշներ , չերեւիր թէ մասնաւոր բլուրներու կը պատկանին . Յես. ի 7 , այլ թէ այն ազգաց սահմանակից կը թուին՝ ուր երկրին երեսը ընդհանրապէս բլրային է . Յես. Ժէ 13 :

Ե. — ԴԱՇՏԵՐ ԵՒ ՀՈՎԻՏԱՆԵՐ

- | | |
|-----------------------------------|--|
| 1. Յորդանանու Դաշտ | 7. Ռափամի Հովիտ |
| 2. Յեղրայէլի կամ Սադրաւալոնի Դաշտ | 8. Էլայի Հովիտ |
| 3. Սարօն | 9. Մամբրէի Դաշտ |
| 4. Մօրէի Դաշտ | 10. Աղի Հովիտ |
| 5. Յովսարաթի կամ Սաւայի Հովիտ | 11. Յուդայի անապատը՝ որ Զիփի , էնդադդիի եւ 6. Ենովմի Հովիտ |

1. Յորդանանու Դաշտը կը տարածուի համանուն գետոյն ընթացքին Երկայնութեամբն Դեննեսարէդ լճէն մինչեւ Մեռեալ Ծովը : Ունի իրր 70 մղոն Երկայնութիւն , 5-12 մղոն տարածութիւն և ամենէն նեղն է ի հիւսիսային աստիճան :

Կրկնակ հովիտներէ կը բազկանայ՝ որոց ներքինը , գետէն ոռոգեալ , բեղմնաւոր է և առատ՝ կանաչութեամբ . մինչ արտաքինը աւազուտ է և անմիրգ : Տակաւ առ տակաւ Մեռեալ Ծովուն մօտենալով մեծապէս կ'ընդարձակի և արեւելեան կողմը կը կաղմէ Երկիքովի դաշտն , և արեմտեան կողմը՝ Մովսարու դաշտերն : Յորդանանու դաշտին

ստորին բաժինն էր այն՝ (որոյ մէկ մասը թաղուած է Մեռեալ ծովուն մէջ) զոր Ղովա ընտրեց երբոր բաժնուեցաւ Արլահամէ . Ծննդ. մ.թ. 10 : Յովհաննէս Մկրտիչ յաճախ կ'այցելէր Յորդանանու Հովիտն իւր ժողովրդային ծառայութեան միջոցնեն . Մատթ. գ. 5 : Եթէ+*վ քաշը ծածկուած էր յոյժ հարուստ և արդասարեր հողով մը , սակայն հիմա բոլորովին անմշակ եղած է : Հնա բանակեցան Խորայելացիք Յորդանանէ անցնելէն վերջ և երիքովի կործանումէն առաջ . Յես. դ. 13 : Նոքա Մովլարու գաշտերուն մէջ բանակած էին երբոր Մովսէս Նաբաւ լեռն ելաւ ի մեռանել . Օր. լ.Դ 1 : Յորդանանու գաշտը հիմա կը կոչուի էւ+*ը :

2. Յեզրայէլի Դաւթը՝ որ Սր. Գրոց մէջ յիշուած է Մակերտ*վ Հովիք և կը կրէ նաեւ Յունական Աստրասըն անունը , ընդարձակ հովիտ մ'է Թափորէն մինչեւ Կարմեղոս , և Մր. Սթէփէնս հաշուած է 15 քառակուսի մղոն :

Սա Քիսօն գետէն ոռոգուելով յանշափս հարուստ հող մը կ'ստանայ : Թերեւս աշխարհի մէջ չկայ երկիր մը որ այնքան կոիւներու և արիւնհեղութեան վայր եղած լինի որքան այս Յեզրայէլի գաշտը : Հոս, Թափորի ստորոտը, Թեփորա և Բարակի ճակատամարտ հրաւիրեցին Սիսարայի բանակն . Դատ. դ. 14 : Գէղէօն և իւր 300 մարդիք հրաշապէս հոս նուածեցին Մադիա-

նացոց և Ամաղեկացոց բանակներն . Դատ. գ. 33: Հնա մղեց Սաւուղ իւր վերջին պատերազմն . Ա Թագ. իթ. 1 : Հնա տեղի ունեցաւ Յուդայի Յովսիային տարաժամ մահն մինչ կը կոռուէր Եգիպտոսի Նիքով տիրապետին հետ . Բ Մնաց. լ.Ե 22 : Այս բլրոյն վրայ Հոռովմայեցիք երկիցս նուածեցին զշրեայս :

3. Ասրօնի Դաւթն կամ Հովիս երկրի արգասաւոր սահման մ'է որ ծովեղերքն ի վեր կ'երկնայ Յոպպէէն դէպ ի Կեսարիոյ հիւսիսային կողմը : Իւր անունը կ'առնու Եփրեմի մէկ քաղքէն՝ Լասարօնէն . Յես. մ.թ. 18 : Սոյն հովիտ Ս. Գրոց մէջ կարեւորութիւն ստացած է իւր գալարագեղութեան համար . Ա. Մնաց. ի.Ե 29: Սողոմոն «Սարոնի վարդը » կը գործածէ ի նշան գեղեցկութեան . Երգ. Բ 1 :

4. Մօրէի Դաւթը ամենէն գեղեցիկ ու պըտղաբեր երկրաց մին է ի Պաղեստին , Եբաղի և Թարիղինի միջեւ :

Ճոկսաբար կ'ոռոգուի ազրիւներէ և առուակներէ , և լի է նուշի , կիտրոնի և ձիթապըտղոյ ծառոց պուրակներովն : Սուսամի քաղքէն սակաւ ինչ ի հարաւ կը գտնուի Յակոբայ ջրհորն՝ ուր նստաւ Քրիստոս Սամարացի կեոջ հանդիպած ատեն . Յովհ. դ. 6 , և ասկէ ոչ մի հեռի կը կենայ Յովսէփի տապանն . Յես. ի.Դ 32 : Հարաւէն

այս հովիտը կը տարածուի փոքր դաշտի մը մէջ
որ մէկ մասն ըլլալ կը թուի այն գետնին՝ զոր
թակոր գնեց Սիւքէմի հօր, Եմովրի որդոցմէ .
Ծննդ. լի 19: Իւր արդի անունն է Նաբլու :
Հովիտ :

5. Յովսաբարի Հովիտը նեղ ծործոր մ'է Ե-
րուսաղէմի արեւելեան կողմը : Երբեմն կը կոչուի
Քէրքնէ Զոր համանուն վտակին իւր մէջէն հոսե-
լուն համար :

Այս հովիտ նոյն ըլլալ կը կարծուի Սալսնէ
հովիտն հետ՝ ուր Սողոմի տիրապետը դիմաւորեց
զԱրահամ. Ծննդ. ԺԴ 17: Վաղեմի ժամանակաց
մէջ Երուսաղէմի բնակչաց գերեզմանն էր այն, և,
տակաւին, աշխարհի ամեն կողմերէն Հրեայներ
յաճախելով կը բաղձան իրենց փոշին թողուլ իրենց
հարցը փոշոյն քով : Հովտին երեք ներդործիչ տ-
ռարկաներն են Զարիոյ, Աբիսողոմայ և Յովս-
բաթի տապաններն :

6. Ենովմի՝ կամ աւելի ճշդիւ, Ենովմի որդ-
ւոյն հովիտը (Յես. ԺԵ 8), նեղ ու ապառաժուտ
կիրճ մ'է Երուսաղէմայ հարաւային կողմին վրայ .
Յովսափաթի հովտին աջ անկեանց մէջ :

Հովտին արեւելեան ծայրին մօտ կը գտնուի
Թաղէնէն կոչուած վայրն՝ ուրկէ Հրէայք կը դիտէնին
թաղի և Մողոքի ծէսերն (Պ. Թագ. ԻԳ 10) և
իրենց զաւակունք կրակին մէջէն կ'անցունէին իրը

զոհ . Երեմ. լ. 34: Հաւանորէն այս վերջին պա-
րագայէն տրուած է այժմու անունն (Գեհեն) ի
Հրէից՝ որ և գործածուած է ի ցոյց տանջանաց
տեղոյն : Հովտին հարաւային կողմը՝ որոյ մօտ
կը միանայ Յովսաբաթի հովտին հետ, կայ Բրու-
տին Աբար որ գնուած է 30 կտոր արծաթի .
Մատթ . ԻՒ 7:

7. Ուափամի Հովիտը կը տարածուի Երու-
սաղէմէ իրը Յ մղոն դէպ ի հարաւային արեւմուտք,
մերձաւորապէս 2½ մղոն դէպ ի Բեթէհէմ :

Անունը, հաւանաբար, կ'ելնէ նախկին բնակչաց
հզօր հասակէն — Ուափայ կը նշանակէ հսկայներ .
Յես. ԺԵ 8: Անոր մէջ տեղ մը նշանակուած կայ իրը
գերեզման Ուաքէլի . Ծննդ. ԼԵ 19, և վայրն է
Դաւթի ընդ Փղատայիս հանդիպած շատ մը դէպ-
քերուն. Բ. Թագ. Ե 22. Ա. մնաց. ԺԵ 15. ԺԴ 9:

8. Էլայի Հովիտը հաստատուած է իրը 10
մղոն դէպ արեւմուտք Երուսաղէմի :

Արգաստաւոր և հաճելի է . բայց գլխաւորա-
բար շահաւէտ է իրեւ վայր Դաւթի և Գողիադի
միջեւ պատահած դիպուածոյն. Ա. Թագ. ԺԵ 2. ԻՍ 9:

9. Մամբրէի Դաւթը արգաստաւոր դաշտ մ'է
Քերընի հարաւային կողմը, և այնպէս կոչուած է
Մամբրէ՝ որ իւր արշաւանաց ատեն դաշնակցու-
թին կ'ընէր Արբահամի հետ ընդդէմ Քոդողա-
գոմորի բանակին. Ծննդ. ԺԴ 13 :

Սա կը պարփակէր Մահմետայի դաշտն ու այլք՝
զորս գնեց Աբրահամ իրեւ գերեզմանավայր մը .
Ծննդ. իԵ 9 : Այս մերձաւորութեան մէջ է նաեւ
Ես+ունէ Հովհանն՝ ուրկէ Հրէայ լրտեսներն կտրեցին
խաղողի ողկոյզն Մովսէսի համար, սակայն ցարդ
անծանօթ կը մնայ . Թու. ԺԴ 24 :

40. Աղի Չորր Մեռեալ ծովին սկսեալ կը
տարածուի դէպ ի կարմիր ծովուն արեւելեան
բազուկը .

Կըսուի թէ, Սոլոմայ կործանումէն և Մեռ-
եալ ծովու կաղմութենէն առաջ, Յորդանանու
մէկ մասն կը կաղմէր : Այս էր Եթովմացւոց վրայ
տարուած կրիստու յաղթութեանց վայրն . Բ. Թագ.
Ը 13. Դ. Թագ. ԺԴ 7 :

41. Յուդայի Անապատը նահանգ մ'է՝ որ կը
տարածուի Բերբոնէ յարեւելս Մեռեալ ծովու, և
հիւսիսէն հարաւ կը յառաջանայ նոյն ծովուն ե-
զերքին երկայնութեամբ :

Թէպէտեւ անապատ կոչուած սակայն պէտք
է հասկնալ սոսկ մշակութենէ զուրկ, զի, թողով
իւր ինքնաբեր արտադրութիւններն, կը գործած-
ուի իբր արօտատեղի : Բազմաթիւ քաղաքներ և
գիւղեր հաստատուած էին անոր մէջ (Յես. ԺԵ 6),
և այն նահանգն էր ուր Յովհաննէս Մկրտիչ սկսաւ
իւր ժողովրդային ծառայութիւն . Մատթ. Գ 4 :
Անապատին հիւսիսային մասը երբեմն կը կոչուէր

Թէկու-է Անապատ : Յովլաբ այս տեղէն բերաւ կիներն
Աբիսողոմը կանչելու թոյլտուութեան համոզելու
համար զԴաւիթ . Բ. Թագ. ԺԴ 2 : Արեւելեան
կողմը կար Զէտի անապատն՝ ուր ապաստան գտաւ
Դաւիթ Սաւուղի վրէժինդրութենէն խոյս տալու
ատեն . Ա. Թագ. ԻԴ 14 : Արեւելեան կողմը կը
գտնուէր Ենդարդիլ անապատն, Մեռեալ ծովուն ա-
փանց վրայ : Այս եւս պատճառ եղաւ Դաւիթի
ապաստանութեան այրերէն միոյն մէջ՝ որով յոյժ
առատ են մերձակայ լերինք, և որոց մէջ կտրեց
Սաւուղի վերարկուին ծայրը մինչ կը քնանար . Ա.
Թագ. ԻԴ 1-4 : Նահանգին հարաւային բաժինն
էր Մասնէ անապատը : Հնա եւս Դաւիթ, ժամանակ
մը, ապաստան վնտուեց Սաւուղի կատաղութենէն .
Ա. Թագ. ԻԴ 24 : Նարազ՝ մերժելով մարդաբիու-
թիւնն առ Դաւիթ և անոր մարդիքը, բնակեցաւ
քաղքի մը մէջ՝ որոյ ընծայեց նահանգին անունը .
Ա. Թագ. ԻԵ 2 : Այս նահանգաց իւրաքանչիւրն
իւր անուն կ'առնու մերձակայ մի քանի քաղաք-
ներէ կամ գիւղերէ՝ յոյոց թէկուէի, Մասնի և
Զիփի աւերակներն դեռ կը մնան :

ՓՈՔՐ ՀՈՎԿԻՏՆԵՐ

Ա.+Հէտ Հովհաննէ . Բենիամինի արեւելեան կողմը ,
Գաղղաղայի մօտ՝ ուր գարկոծուեցաւ Աքար իւր

գողութեան համար յերիքով . Յես . է 24 : Այէլնէ
և Գաբրոնէ Հովոնէր , Դանի ցեղին մէջ . Երուսա-
ղէմի հիւսիսային արեւմտեան կողմը՝ որոց վրայ
կեցան Արեւն ու Լուսին մինչեւ Յեսուայ հրամանն .
Յես . Ժ 12 : Սէքոնայէ Հովոնը . Յուդայի արեւմըտ-
եան կողմը , Մօրէայի քաղքին մօտ՝ ուր Ասա յաղ-
թանակ տարաւ Եթովպացւոց ի վերայ . Բ Մնաց .
ԺԴ 9 , 10 :

Մեռեալ ծովուն մակերեսը ի սկզբան կը կո-
չուէր Սէրբէն Հովոնը . Ծննդ . ԺԴ 3 : Յոյժ արգա-
սաւոր էր Ղովտի բնակարան եղած ատեն . Ծննդ .
ԺԴ 10 . բայց իւր բնակչաց տկարութեան պատ-
ճառաւ խառնուեցաւ Սողոմի աւերակաց մէջ և
եղաւ Աղի ծովուն յատակը . Ծննդ . ԺԹ 25 :

Զ. — ԳԵՏԵՐ

1. Յորդանան

Միջերկրական ծովը թափող

2. Քիսոն : 3. Կանա : 4. Բոսոր Հեղեղատը

Ճիւղ Յորդանանու եւ Միջերկրական ծովու յարեւմուս
5. Քերիդի Հեղեղատը : 6. Քիդրոն կամ Կեդրոն Հեղ .

Ճիւղ Յորդանանու եւ Մեռեալ ծովու յարեւելու

7. Յարբուղ : 8. Առնոն :

1. Յորդանան՝ Կիբանանէ կ'ենէ և դէպ հա-
րաւ հոսելով Մեռեանի ջուրերն ու Գալիլիայի ծովը
կը ձեղքէ և կը թափի Մեռեալ ծովը : Իւր ակնէ
առատահոս աղբիւր մը Հասպիա (Hasbeiya) քաղ-
քին հիւսիսային արեւմտեան կողմը՝ որմէ զատ ու-
նի երկու փոքր ակեր եւս — մին ի Պանիաս (Կե-
սարիա Փիլիպպէ) , և միւսը ի Թէլ-էլ-Գագդի ,
Դանի հին քաղքին մօտ — որոնք իրենց հոսանքը
միացոնելով կը թափին Մեռեանի ջուրց ի մէջ : Յոր-
դանան իւր անուն կ'ընդունի այս լճէն ելնելուն
համար , և իրը 9 մղոնի խոտորնակ հեռաւորութենէ
վերջ կը մտնէ Գալիլիայի ծովը : Կ'ընթանայ խո-
րուն և ընդարձակ անջրապետի մէջէն և կը լցուի
Մեռեալ ծովուն մէջ . Գալիլիայի ծովէն շուրջ 70
մղոն դէպ հարաւ :

Թէկ Յորդանանու հեռաւորութիւնը , ակէն
մինչեւ Մեռեալ ծովու մուտքը , 100 մղոնէն աւելի
չէ , սակայն գետոյն աւազանը այնքան ոլորուն է
որ իւր ակը 180 մղոն վեր կը միայ : Յորդանանու
միջին լայնութիւնը՝ իւր ական խոնարհագոյն մա-
սանց մէջ 90 սոք , և խորութիւնը իրը 9 սոք կը
հաշուուի : Ունի կրկնակ եղերքներ , միջին և ար-
տաքին : Միջինք կը կազմեն իւր բուն աւազանը ,
իսկ արտաքիններուն կը հասնի ողողման ժամանակ :
Սոյն ափանց մէջ գանուող անջրապետը , այս կամ
այն կողմի վրայ ծածկուած է մացառով , և իրը

պատսպարան կը ծառայէ բազմաթիւ վայրի կենացնեաց . Երեմ. Խթ. 19 : Յորդանանու Նոր Կտակարանի պատմութեան հետ ունեցած կապակցութեան գլխաւոր դէպքն է Խորայէլացւոց անցքն ընդ այն որպէս ցամաքի՝ Երբոր վերէն եկող ջուրը «կեցաւ շեղակոյտի մը վրայ» մինչեւ որ ամբողջ ժողովուրդը ապահովապէս անցաւ . Յես. Գ 14-17: Իւր ջուրերը յետոյ բաժնուեցան Եղիայի վերարկուին հարուածին տակ , մինչ Եղիաէի հետ անցան իւր յերկինս համբառնալէն առաջ . և դարձեալ Երբոր Եղիուէ առանձինն վերադարձաւ այն դէպքէն յետոյ . Դ Թագ. Բ 8 , 14 : Նոր Կտակարանի մէջ յիշուած ուրիշ մէկ գլխաւոր դէպքն է Տետոն մերոյ Յիսուսի մկրտութիւնն ի Յովհաննէ Մկրտչ (Մատթ. Գ 13) , որ քիչ մը ատեն քարտզեց ու մկրտեց անոր Եղերաց վրայ . Մատթ. Գ 6 : Վերոյիշեալ դէպքին բուն վայրը ըլլալ կը կարծուի Երիքովի հանդիպակաց մօտ , ուր հաղարաւոր ուխտաւորներ կը յաճախէին ամեն տարի և Եռանդագինս լուսայուելէ վերջ անոր ջուրէն մաս մը կը տանէին իրենց անօթներով :

2: Քիսոն Թափորի ստորոտէն Ենելով , կ'անցնի Յեղայէլի դաշտին մէջ , և Կարմեղոսի խարսխէն կը թափի Ակրոն ծոցը :

Անձեւոտ Եղանակաց մէջ , կամ , մերձակայ Երանց հալման ժամանակ , անանցանելի հեղեղով

մը կը յորդէ : Անտարակոյս այս ժամանակ էր Երբոր Սիսարայի բանակը ցրուեցաւ անոր Եղերաց վրայ , ինչպէս կ'երգէ Դերորայ . «Քիսոն հեղեղատք քշեց տարաւ զանոնք» . Դատ. Ե 24: Քիսոնէ շատ Եղիուէ ջարդեց Բաաղի 400 մարդարէներն , Կարմեղոսի վրայ զոհ մատուցանելէն յետոյ . Դ Թագ. Ժ 40 :

3. Կանան փոքր առուակ մ'է՝ որ Եփրեմի լեռներէն Եղելով Միջերկրական ծովը կը թափի իբր 12 մղոն դէպ հարաւ Կեսարիոյ :

Սա կը կազմէ սահմանն ի մէջ Եփրեմի և Մանասէի ցեղերոն . Յես. Ժ 8 . Ժ 9 , 10 :

4. Բոսոր Հեղեղատը Յուգայի լեռներէն կը հոսի Միջերկրական ծովը Կազայէ սակաւ ինչ ի հարաւ :

Դաւիթ Սիկելակը աւերող Ամաղեկացիներէն հալածուելու ատեն , հոս թողուց 200 մարդիկը՝ ուրանք չէին կը անցնիլ գետէն . Ա. Թագ. Լ 9 , 10: Հաւանաբար այս հեղեղատին մէջ էր՝ ուր Փիլիպպոս մկրտեց Եթովպացի ներքինին . Գործ. Ը 26 , 36 :

5. Քիրիլ Հեղեղատը արեւմուտքէն կը միանայ Յորդանանու Երիքովէ ոչ հեռի :

Այս էր Եղիուէի բնակավայրն նշանաւոր շրջանի մը համար , Երբոր առաւոտ և Երեկոյ կը կերակրուէր ագռաւներէն մինչ ի ցամաքելն հեղեղատին : Դ Թագ. Ժ 3-7 :

6. Կեդրոն Հեղեղատը կ'ելնէ Երուսաղեմէ իրը
2 մղն դէպ հիւսիս և՝ հոսելով Յովսաբաթի հով-
տին հարաւային մէջէն , կը գառնայ հարաւարեւ-
մուտք և կը թափի Մեռեալ ծովս : Ամառը թէն
չոր կ'ըլլայ իւր աւազանը , և սակայն ձմեռը , և
մանաւանդ , յորդ անձրեւներուն ատեն , մեծ առու
մը կը հանդիսանայ :

Դաւիթ հուէն անցաւ Երրոր Արիսողոմի առ-
ջեւէն խոյս կուտար Երուսաղէմէ . Բ Թագ. ԺԵ
23 , 30 : Իւր ափանց քով Ասա իւր մօր , Մաս-
քային , շինած կուռքը այրեց . Բ Մնաց . ԺԷ 16 :
Եղեկիս ասոր աւազանին մէջ նետեց տաճարին
պղծութիւններն . Դ Թագ. ԻԳ 4 , 6 , 12 : Քրիս-
տոս Գեթսեմանի պարտէղ գացած ատեն Կեդրո-
նէն անցաւ դիշերայն Երրոր քահանայապետին
ձեռքը մատնուած էր . Յովհ . ԺԸ 1 :

7. Յաբբոկ փոքրիկ գետ մ'է՝ որ կ'ելնէ Ռա-
բադ ամոնի (Raibath ammon) մօտ Գաղաադ լեռ-
ներէն և կը թափի Յորդանանու հիւսիս արեւմո-
եան կողմը : Իւր յատակը ժայռուտ է և հոսանքը՝
արագ :

Այս կը կազմէ հարաւայն Ամորհացւոց և հիւսի-
սէն Ամմնացւոց Երկիրներուն սահմանն . Թու . ԻՈ.
24 . Օր. Գ 16 . և անմիջական մերձաւորութեամբ
Յակոբ ըմբշեցաւ հրեշտակին հետ . Ծննդ. ԼԲ 22 :

8. Առնոն կ'ելնէ Գաղաադ լեռներէն Յաբ-

բոկի հարաւային մեծութեամբ , և կը թափի
Մեռեալ ծովը :

Այս գետն էր սահմանագիծն ի մէջ Ամորհաց-
ւոց և Մովաբացւոց . Թու . ԻՈ. 13 : Ասոր մօտ
Պարայէլացիք՝ Մովսէսի ներքեւ , պարտեցին զՍե-
հոն , Ամորհացիները , և տիրեցին անոնց Երկրին .
Թու . ԻՈ. 24 :

ՓՈՔՐ ԱՌՈՒԱԿՆԵՐ

Գառակ առուակներն կը գտնուին Գաաս բըլ-
րոյն ստորոտն յեփրեմ . Բ Թագ . ԻԳ 30 : Սովէն
հեղեղատը Յուդայի և Դանի մէջէն կը հոսի դէպ
ի Միջերկրական ծով : Այս հովտին մէջ կը բնակէր
Սամփսոնի կին՝ Դալիլա . Դատ . ԺԶ 4 : Քիբրոնի
մօտ է Եսէռուն հեղեղատը՝ որոյ ափունքէն Մովսէսի
խրկուած լրտեսներն բերին խաղողի մեծ ողկոյզ
մը . Թու . ԺԳ 24 : Եսէռուն էտու՝ որ ընդհանրա-
պէս նեղոս ցուցուած է , մի քանի անցիւք կը
պատկանի առուի մը՝ որ Յուդայի լերանց հիւսի-
սէն կը հոսի դէպ ի Միջերկրական ծով և Պաղես-
տինու սահմանն կը կազմէ ի հարաւոյ . Թու . ԼԻ 5 :

Ե. Լ Ի Ճ Ե Ր

1. Մեռոնի ջուրերը :

2. Գալիլիայի ծովը՝ որ կը կոչուի նաեւ Տիբերիոս
ծով . Գեննեսարէթի լիճ , կամ Քէնէրէթի ծով .

3. Մեռեալ կամ Աղի ծով՝ որ եւ կը կոչով Սոդոմի
կամ Դաշտի (Plain) ծով :

4. Մեռնի ջուրեր՝ Գալիլիայի հիւսիսային
կողմը, կինան նկատուիլ ջրշեղը մը՝ յորում կը
միանան Յորդանանը կազմող այլազան առուակաց
ջուրերն։ Գալինան մէջ լիճը 7½ մղոն երկայնու-
թիւն և 3½ մղոն լայնութիւն կ'ունենայ, իսկ Ա-
մառը՝ սակաւ ինչ աւելի քան ճահիճն։

Մեռնի ջուրերը Սր. Գրոց մէջ նկատուած են
այն տեղն ուր պատահեցաւ Յեսուայ և Հասորի
Յարինի զօրաց միջեւ եղած ճակատամարտն. Յես.
Ժ. 5, 7։ Այժմու անունն է Պահր-Էլ-Հուլ։

2. Գալիլիայի ծովն իրը 9 մղոն դէպ հա-
րաւ, Յորդանանէ կազմեալ երկրորդ լիճն է։ Ունի
12 մղոն երկայնութիւն, և գրեթէ, 6 մղոն լայ-
նութիւն իւր ընդարձակադոյն մասին մէջ։

Զայն կը պարփակեն ջուրին ծալրէն յանկար-
ծակի 500-1000 սոտք բարձրութեան հասնող ահա-
վեժ բլուրներ։ Այսպէս կը մնայ խոր խարսխի սը մէջ,
իւր մակարդակը 300 սոտք վեր է Միջերկրական
ծովու մակերեսոէն։ Առատալի է զանազան ձուկե-
րով՝ զորս, սակայն, դոյզն յարդ ստացած են
աջակայ բնակիչներէն։ Հին ատենները իւր ափունքը
զարդարուած եին բազում քաղաքներով և գիւղե-
րով, և իւր ջուրերը ծածկուած եին հարիւրաւոր
նաւերով, սակայն զարդիս՝ ի բաց առեալ սոյն

քաղաքաց վլատակներն, ոչինչ կը գտնուի անդ, և
հաղիւ մէկ նաւ կիմայ գանուիլ լճին վրայ։ Գա-
լիլիայի ծովը նոր Կտակարանին մէջ նշանաւոր է
լոկ Քանանու սահմանաց կամ մերձաւոր ազգաց
հետ ունեցած կապակցութեամբ Գևերէնի ծով ան-
ուան տակ. Թու. Լի 11. Յես. ԺԲ 3։ Նոր Կտա-
կարանին մէջ բազմիցս ակնարկութիւններ եղած
են անոր նկատմամբ։ Մեր Փրկչին նախահետեւողք
իրեն առաքեալներ ըլլալու կոչում ստացան սորա
ափունքէն. Մատթ. Դ 18, 24։ Մէկէ աւելի դի-
պաց մէջ սաստկայոյզ փոմորիկներ հանդարտե-
ցան անոր վրայ իւր մէկ զօրեղ խօսքով. Մատթ.
Ը 26. և անգամ մը քալեց անոր վրայէն իրրեւ
ցամաք երկրի մը, Մատթ. ԺԴ 25։ Չուկերու
հրաշալի առատութիւն մը հանուեցաւ անկէ իւր
հրամանին հնազանդութեամբն. Ղուկ. Ե 4, 9.
Յով. ԽՈ. 6։ Յետ յարութեան այս լճին եղերքը
երեւէ և իւր աշակերտաց. Յով. ԽՈ. 1, 7։ Իւր
արդի անունն է Պահր-Էլ-Թաղարէն։

3. Մեռեալ ծովը Պաղեստինու լճերուն ամե-
նէն մէծն է 40 մղոն երկայնութեամբ, 9 մղոնի
միջին լայնութեամբ, և 2-200 գրկաչափ այլայ-
լական խորութեամբ։ Սա կը կենայ Յուդայի ցե-
ղին արեւմտեան երկայնութեամբ և կ'անջատէ
զայն Մովաքի և Ռուբէնի մասէն։

Իւր լցուցած առազան երբեմն էր Սիդորիմի

ձորը, փոխանակ Սոդոմ Գոմորին. Ծննդ. ԺԴ 3: Ամեն կողմէ պարփակեալ է բարձրաբերձ, խորտութորդ և անքերրի բլուլներով՝ յորոց ոմանք լճին մակերեսէն 2000 սոք վեր կը բարձրանան՝ որ 4300 սոք ցած է Միջերկրական ծովու մակերեսովիթէն։ Իւր տեսակնարար ծանրութիւնն է 1.244, թարմ ջուրը 1 հաշուելով. և տարբազադրութեամբ գտնուած է որ իւր ծանրութեան $\frac{1}{4}$, ը աղ է։ Սոյն պարագայք թեթեւօրէն կը ներկայացունեն զայն, այնպէս որ գոյզն աշխատանք բաւական են մակերեսին տակ խորասուղերու։ Անոր մէջ ո՛չ ձուկ և ոչ ալ ուրիշ կենդանի գտնուած է, և ափանց վրայ ալ չկան բոյսեր ոչ մի տեսակի։ այս պատճառաւ թերեւս, ընդունած է «Մեռեալ ծով» անուն՝ ուրով ծանօթ է առ հասարակ։ Ծովեղերքը բաւական ժամանակ մնայողներու մէջ պատահեալ քանի մը մահացու դէպքերով հաստատուած է որ մերձակայ մթնոլորար բոլորովին ապականեալ է։ զայս, սակայն, վերագրելի չէ բուն ծովուն արտաշնչութեանց, այլ ափանց վրայ գտնուող գարշահոտ աղբերներուն և ճախիններուն։ Մեռեալ ծովոն բոլորակը մեծ քանակութեամբ կարելի է ձեռք բերել բորակ, ծծումբ և կուպր. և մերձակայ ժայռից շատեր գրեթէ բոլորովին աղէ կազմուած են։ Իւր մակերեսը գտնուող գոլորշիք այնքան շատ են՝ որ, թէե Յորդանանու, Առնոնի և ուրիշ փոքր

գետակներու ջուրերը կ'ընդունի, և, սակայն, զանոնք ամենքն ալ կը ծծէ։ Այս կրնայ նկատուիլ (accounted for) մթնոլորտին ջերմութեամբ որ արեւադարձէն աւելի է։ Նոր կտակարանին մէջ անգամ մ'իսկ յիշուած չէ այս ծովը։ Հին կտակարանի հետ կապակցութիւն ունեցող զիխաւոր դէպքն է Սոդոմ Գոմորին կործանումն. Ծննդ. ԺԹ 24-29։ Հիմա մերթ կը կոչուի Ես կապակցու վէճ՝ իւր մէջ գրտնուած կուպրին համար, և Արաբացիներէն՝ Պահրէւլուն կամ Ղովտի ծով։

Հ. — ԱԻՍ.ԶԱՆՆԵՐ ԵՒ ԱՂԲԻՒՐՆԵՐ

1. Յակոբայ Զրհորն
2. Գեհոնի Աղբերակն
3. Սելովամի Աւազանը
4. Բեթեսդայի Աւազանը
5. Սողոմոնի Աւազաններն

1. Յակոբայ Զրհորը հաստատուած է Նաբզոսի հովտին մէջ Սիւքէմէ քանի մը մղոն հեռի։ Իւր խորութիւնն է 75 սոք, բայց հիմա չոր է։

Այս ջրհորին քով նստաւ Քրիստոս Սամարացի կնոջ հետ խօսած ատեն. Յովհ. Դ 6, 12։

2. Գեհոնի Աղբերակը կը գտնուէր երուսաղէմայ արեւմտեան կողմին վրայ։

Հնու օծուեցաւ Սողոմոն. Գ Թագ. Ա 33, 38։ Գեհոնի ջուրերը Գաւթի քաղաքին մէջ կը տանէր Եղեկիա հաւանօրէն Սէնէքէրիմէ պաշարեալ լինելու ակնկալութեամբ. Բ Մնաց. ԼԲ 30։

3. Սելովամի Աւազանը կը կենայ Երուսաղէմի հարաւային կողմը։ Արհեստահան ջրշեղ մ'էր այն շուրջ 24 ոտք խորութեամբ։

Զուրը կը բղիսի աղբիւրէ մը՝ որ հիմա կը կոչուի Կոյսէն (Virgin) առէւ-ը Յովսաբաթի հովտին մէջ, և Սելովամ կը տարուի ստորերկեայ խողովակով մը, Օֆէի բլոյն տակէն։ Մեր Փրկիչը աշքերը կառով օծած անձին հրաման ըրաւ երթալ լուացուիլ այս աւազանին մէջ, և նա «լուացուեցաւ և եկաւ ու կը տեսնէր»։ Յովհ. Թ. 7։ Զուրը թէե չունի մասնաւոր յատկութիւն մը, սակայն տակաւին սնապաշտութեամբ կը դործածուի այն կուրութեան դժբաղդ վիճակի համար։

4. Բերեսդայի Աւազանը («Գթութեան տուն») մեծ ջրամբար մը կամ ջրշեղ մ'է Երուսաղէմի արեւելեան կողմը։ և մէկ կողմէն սահմանափակեալ է տաճարին արքու պատով։ Ունի 300 ոտք երկայնութիւն, 120 ոտք լայնութիւն և մօտաւորապէս 75 ոտք խորութիւն։

Սա շրջապատեալ է հինգ գաւիթներով՝ որոց Երկուքին մնացորդները տակաւին կը մնան։ Յովհ. Ե 2։ Սոցա միոյն մէջ Յիսուս գտաւ 38 տարուան հիւանդ մը և բժշկեց զայն։ Յովհ. 48։

5. Սոլովոնի Աւազաններն երեք մեծ աւազաններ են բլոյ մը զառիթափին վրայ, Երուսաղէմէ իրը 7 մզոն ի հարաւ։ Նոքա միմեանց հետ

հաղորդակցութիւն ունին, այնպէս զի բարձրագունին մնացորդ ջուրն կը հոսի Երկրորդին մէջ և անտի ստորնագունին մէջ։

Թերեւս անոնք են Սոլոմոնի ակնարկածներն իւր ըրած մեծամեծ գործոց և արտերը ոռոգելու համար շինած աւազաններուն վրայով խօսած ատեն։ Ժող. Բ 4-6։ Սոլոմոնի աւազաններէն մինչեւ բլոյ կողմերը ջրմուղ մը կ'առաջնորդուէր՝ որով ջուրի նշանաւոր հոսանք մը կը տարուէր յԵրուսաղէմ։

Թ. — Կլիման, ՀՈՂՆ ՈՒ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Ընդհանրապէս խօսելով Պաղեստինու կիման մեղմ և առողջարար է։ Անձրեւոտ եղանակները սովորաբար Հոկտեմբերի վերջերը կ'ըլլան, երբոր երկիրը հերկուած ու ցանուած է։ և Ապրիլի վերջը՝ հունձքի սկսումէն առաջ։ Հրէայք կը ճանչային զայնս իբրև «առաջին և վերջին անձրեւ», և մեծապէս կը գնահատէին իրը էական պէտք մը արմուեաց հասուննալուն։ Այս յշջաններու մէջ ուրոտումը շատ յաճախագէպ է սնդ, թէե ձմեռ ատեն լսելի կ'ըլլայ միայն դաշտերու մէջ և ամառը՝ լեռներու վրայ։ Տարւոյն մնացեալ եղանակաց մէջ դուն ուրեք անձրեւ կը տեղայ՝ որոյ պէտքն կը փոխարինուի առատ ցօղոյ կայլակներով, մասնաւորաբար դաշտային երկրաց մէջ։ Յօղոյ հանապազորեայ յիշատակութիւնն՝ ի Սր. Գիրս, ապացոյց

մ'է ցուցնելու թէ որքան կը գնահատուէր այն իբրևեւ աղբիւր երկրին արդասաւորութեան . Ծննդ . իէ 28 . Սաղմ . ձլի 3 :

Պաղեստինու հիւսիսային երկրաց լեռները զիսաւորաբար կը բաղկանան կրային ապառաժներէ . բաց-ճերմակ գունով և մեծապէս կարծր : Երուսաղէմի կամ անոր մերձակայ ապառաժներն ևս նոյն կազմութիւնն ունին : Բայց Մեռեալ ծովն երկնցող բլուրներն ու խոնարհագոյն Յորդանանը որձաքար (granite) և այլ բաղադրութիւններ ունին : Պաղեստինու զանազան մասանց մէջ բլուց վերին խաւերը բաղադրեալ են դիւրաթեկ կաւճային գոյացութեամբ մը՝ յորում գտնուած են ծածկեալ բուստեր , խեցիներ և ձուկեր , ինչպէս նաեւ քարացած պտուղներու նման գայլախազեր : Այս վերջինք գլխաւորաբար առատ են կարմեղոսի մէջ : Մովսէս կը նկարագրէ քաղաքը իբրւ « Երկիր մը՝ որոյ քարերն երկաթ են , և որոյ գաշտերուն մէջ կարելի է պեղել արոյր (brass) ». սակայն զարդիս եթէ կան մետաղներ Պաղեստինու մէջ , Լիքանանու հարաւային կողմը , բնակչաց անտարբեշութիւնն ու նուաստութիւն թոյլչեն տար իրենց որ և իցէ օգուտ քաղել անսնցմէ : Մրբազան գըրուածքներ կը հաստատեն թէ Հրէայք ծանօթացած էին այլազան թանկագին քարերով . և լերանց համբաւն առիթ կ'ուտայ հաւտալու թէ տպազիոն ,

զմբուխա , բիւրեղ և գեղեցիկ յասպիս կրնան առատ ըլլալ , բայց բնակիչք դոյլն խնամք կը տանին անսնցմէ օդառելու մասին :

Սուրբ երկրին հողը՝ Հրէից ժառանգութեան ատեն , անտարակուսելի կերպով հարուստ էր , և լիովին իրադործեց Մովսէսի շողշողուն նկարագրութիւնն անոր նկատմամբ . Օր. ի 8, 9 : Ոչ միայն գաշտավայրեր և հովիտներ մշակութեան ենթարկուած էին , այլ և , գարատախներու և թամբաշինութեան համար , մինչեւ իսկ բլուրներն բերբի կը լինէին մինչ ի կատար իւրեանց : Սոցա ապացոյցներ կը մնան գեռ հողը զառիվայրէն պահպանելու համար հասաւասուած պատերու փըլատակաց մէջ : Կան նաեւ ջրանցքի հետքեր որոց միջոցաւ ջուրը աւազաններէն արտերը կը տարուէր ոռոգման համար , այսպէս կը փոխանակուէր անձրեւներու և գետաջրոց պակասութիւնն : Այս կերպով ի յայտ կուգան հողին բնական ճոխութիւններն և մշակներ մեծապէս կը վարձատրուին :

Պաղեստինու բուստական արտագրութիւնք յայժբազմաթիւ են և զանազան . ամենէն հասարակներն են ցորեն , հաճար , գարի , բակլայ և բամբակենի՝ որ ամենուրեք կը զարգանայ . մասնաւոր երկիրներ կ'արտագրեն նաեւ ծխախոտ , Բրինձր կ'աճի Մեռունի ջուրերուն եղերքը , սպիտակ թութնու որթը առատ են լիքանանու մէջ . Սիւքէմ և

Եափա (Յոպպէ) կ'արտադրեն նարինջ, կիտրոն, լէմոն և ձմերուկ. արմաւ և նուռ կը ծաղկին Գազայի մէջ. Լեղակը ինքնովին կ'ածի Յորդանանու ափանց վրայ. քանի մը արմաւենիներ կը պըճնաշզարդեն երիբովի մերձակայքը: Թղենին կը մըշակուի մի քանի շրջանակներու մէջ, և իւր պտուղը կը գործածուի իրը արտածութեան նիւթ, բայց ձիթապտուղը երկրին ամենէն ճոխ արտադրութիւններէն մին ըլլալրվանդերձ գրեթէ բոլորովին անտես առնուած է և կ'ածի գլխաւորաբար վայրի տեղեր:

Կենդանեաց մէջ հասարակաց են մեր բուն ընտանեկանները: Ոչիսար, եղ և այծ կը կաղմեն Երրայեցոց ստացուածքին մէկ մասը: Անոնց ձիերը այնքան շատ չ'են, բայց փոխանակ անոնց առ հասարակ կը գործածուին ազնիւ տեսակի եղներ, ուղտեր և էշեր: Սր. Գրոց մէջ կը գտնեմք քանի մը վայրի անասնոց յիշատակութիւնն՝ (Օր. ԺԴ 4, 5) որոց ոմանք դեռ կը մնան, սակայն ինչ ինչ պատճառներով անկարելի է զանոնք նմանցունել այժմեան ծանօթներէն որ և իցէ միոյն: Սաւուղի առջե Դաւիթ նկարագրեց առիւծի մը և արջի մը հետեւր ունեցած պայքարն. Ա. Թագ. ԺԷ 34. որոց և ոչ մին կը բնակի ի Պաղեստին: Ընձառիւծը տակաւին կ'այցելէ Լիբանանու ամայութիւններն: Բոլենիք և չնագայլեր բազմաթիւ են Յորդանանու

Եղերաց վրայ. արու խոզեր կը դանուին Թափորի և շրջակայից մէջ, և աաղարդիւք մնանող եղիերուաց քանի մը տեսակներ՝ երկրին բարձանց վրայ: Թոչնոց և սողնոց շատ տեսակներ կան ի Պաղեստին, որոնք փութանակի կարելի է նմանցունել Սր. Գրոց մէջ յիշուածներուն: Մեղուներու ստուար բազմութիւն մը կը յաճախէ ժայռերու բացուածքներն. այնպէս զի փութաշանութեան և ուշադրութեան չափաւոր բովանդակութեամբ մը Պաղեստին կրնայ այժմ փոխարինել իւր հին նկարագրութեան. — «Կաթով ու մեղսվ առատ երկիր մը»:

Ժ. ԲՆ ԱԿ Ի Զ Ք

Պաղեստին ի սկզբան կը բնակէին Քամի որդոյն Քանանէ սերեալ ազգաց բազմութիւններ. Ծննդ. Ժ 15-19: Սպա երկրին վրայ բաժնուածէին այսպէս. — Յորդանանու արեւելեան կողմը ժառանգած էին Քանանացիք, Գենեսացիք և Գատմնացիք: Արեւմտեան կողմը՝ ըլլային երկիրն ի հարաւոյ, գրաւուած էր Քետացիներէն, Բերեղացիներէն, Յերեսացիներէն և Ամորհացիներէն: Կեդրոնական երկիրը՝ Քանանացիներէն: Գալիլիայի ծովուն արեւելեան երկիրը՝ Գերգեսացիներէն, և հիւսիսային մասը՝ պարփակելով Լիբանանու զառիվայրն, Խելացիներէն: Եղերքն ի վեր երկրի նեղ

շերտի մը մէջ կը բնակէին Փիւնիկէցիք ու Փղըշ-
տացիք՝ ի հարաւոյ :

Այն ինչ Խորայէլացիք Մովսէսի ներքեւ մօտե-
ցան Ուխտի Երկրին, Յորդանանու արեւմտեան
իշխանութիւնք հազիւ ո եւ է փոփոխում յանձն ա-
ռին, սակայն արեւելեան կողմը Ամորհացիք պա-
հանջեցին երկու իշխանութիւններ, Բասան և Գա-
ղապաթ՝ որոնք Հերմին լեռնէն կը հասնին մինչեւ
ի հարաւ Առնոն գետ, և երկիրը Առնոնի հարաւէն
առնուեցաւ Մովաբացիներէն :

Ամորհացւոց երկու իշխանութիւններն էին ինչ
որ Խորայէլացիք նուածեցին յառաջ քան Յորդա-
նանէ անցքն . Ղովտի սերունդ եղող միւս դրացի
աղինք հաւանեցան թողուլ առանց դժուարու-
թեան : Յորդանանու արեւմտեան կողմին գրեթէ
բոլորովին տիրապետած և աւար առած էին Հրէ-
այք, և, մի քանի տարեաց պատահական ընդ-
միջումով, նորա թողուցին անոր բոլոր տէրերն
մինչ ի գերութիւն Ասորեստանցւոց: Յորժամ տեղի
ունեցաւ, Ասորեստան զանազան քաղաքներէն խառն
բազմութիւն մը կազմուելով հաստատուեցաւ Պա-
ղեստինու կեդրոնական մասանց մէջ, և մի քանի
մնացորդ Հրէից հետ միանալով կազմեցին խառ-
նուրդ ցեղ մը Սահարացիւ անուամբ : Բարելոնի
խառնակութենէն վերջ Յուդայի և Բենիամինի
ցեղերը վերադարձան իրենց սեփհական բնագա-

ւառն՝ զոր պահպանեցին առանց ընդմիջնան մինչև
անոր նուածումն ի Հոռվմէ :

Հրէայք՝ իրենց վաղեմի պատմութեան հա-
մեմատ, երկրագործական և հովուական ժողովուրդ-
մ'էին : Սոլոմոնի տիրապետութեան միջոցին վա-
ճառականական պահանջներն լիուլի կը հոգաց-
ուէին . ատաղձը Տիրոսէն Յոպաէ կը տարուէր
լաստերով . սակին ու արծաթ Թարսիսէն և Ոփե-
րէն կը բերուէին, և սոցա փոխարէն ցորեն, գինի
և իւզ կ'արտածուէին մեծ քանակութեամբ :

Բազմապիսի պատճառներ միացան զՀրէայս
ուրոյն և արտաքսիչ ժողովուրդ մ'ընելու : Պարա-
գայք միացան իրենց արմատին հետ . Եղիպտոսէ
ազատումն և մուտքն ի Քանան . իրենց մասնաւոր
կրօնական ծիսարանը . մասնաւորաբար նոցա Աս-
տուծմէ սերեալ լինելուն խորհուրդը . Մեսիան ի-
րենցմէ սերուած ըլլալուն դիտակցութիւնը . և
իրենց հակամիաւութիւնն մշանջնապէս հեթա-
նոսական սովորութեանց միացունաղ դատաւորու-
թիւններն, ամենեքին կը նպաստեն իրենց անհա-
տականութիւնն համեմելու : Սոյն աղդեցութեան
արդիւնքը յանշափս զօրաւոր եղած է՝ որ ներկա-
յիս մէջ իսկ թէւ ամեն ազգի մէջ մուտ դտած է
(Հրէականը խառնուած չէ որ և իցէ միոյն հետ),
բայց տակաւին այնքան որոշ է որքան Քանանու
անվիճելի տէրը :

Պաղեստինու արդի բնակիչք կը հաշուուին 400,000՝ որոյ մեծագոյն մասը Արաբացի են և առ հասարակ գործածական լեզուն Արաբականն է։ Թուով նոցա յաջորդներն են Քրիստոնեայք, բազում աղանդներու բաժնուած, իրարու հետ ու նեցած հակառակութեամբ ողեւորեալ։ Հրէայք, բաղդատաբար, ընդհանրութեան մէկ փոքրիկ մասն կը կազմեն։ Ասոնցմէ շատերը Եւրոպացի գաղոթներ են՝ որոց զաւակունք եկած են իրենց փոշին թողուլ հարցը փոշոյն տեղ։

Ժ Ա. — Պ Ա. Տ Ա. Կ Ա. Ն

Քանանու բաժանումն՝ Իորայէլի ազգաց միշեւ, տեղի ունեցաւ նախ քան զիրիստոս 1440ին։ Սակայն բնակիչք բոլորվին անկար լինելով, և բազմիցս կռապաշտական արգիլեալ յարաբերութեանց հետեւելով իորայէլացիք գերութեան քանի մը յաջորդական տարիներու ենթակայ եղան գրացի ազգաց տակ իրր պատուհաս իրենց յանցանաց և նոքա այս ստրկութեան վիճակէն աղասեցան նոյն նպատակի համար ընտրեալ գատաւորաց միջոցաւ։ որոնք գթութեամբ կը ծառայէին իրենց կենաց մնացեալ միջոցին, Աստուծոյ առաջնորդութեամբ ճշմարիտը գործադրելով։ Այս կառավարիչներէն մին էր Սամուէլ։ Սա՝ ժողովրդեան իսկ խնդրա-

նօք վիճակաւ տիրապետ ընտրեց զՄաւուղ՝ որ ի գահ բարձրացաւ 1095ին Ն. Ք.։ Իւր և իւր յաջորդներուն տիրապետութեանց միջոցին Դաւթի և Սաղմանի ցեղերը միանալով ուրոյն տիրապետութիւն մը կազմեցին՝ որ իւր փառաց զենիթին հասաւ ընդ Սողոմոննաւ։ Իւր իշխանութենէն անջատուող 10 ցեղերու գլուխ ընտրուեցաւ՝ որդին Ռոբովամ։ Յուղայի և Բենիամինի ցեղերը հաւատարիմ մնացին Դաւթի գերդաստանին։ Այս ժամանակ իսրայէլի և Յուղայի տիրապետութիւններն անջատեցան և զիրաս յոգնեցուցին կայուն նախանձաւորութեամբ ու յաճախադէպ պատերազմներով։ Տարբեր հարստութեանց տկար ու կռապաշտ տիրապետաց հարստութիւն մը կառավարեց զիրայէլ մինչ 721 Ն. Ք. երբ Սաղմանասար գերի տարաւ 10 ցեղերն յԱսորեստան։ բայց այս լիջանէն սկսեալ անձանօթ կը մնայ իւրեանց պատութիւն։ Յուղայի տիրապետութիւնը հաւատարիմ մնաց Դաւթի ընտանիքին մինչեւ 588 Ն. Ք. երբոր ինք եւս նուածուեցաւ զերուսաղէմ աւերող Բարլացիներէն։ 70 տարւոյ գերութենէ ետք Հրէայք ի Յուղա վերադարձան Մետո-Պարսկաստանի կիւրոս տիրապետին հեղինակութեան տակ, վերակազմեցին երուսաղէմ և Պարսկաստանի հպատակ եղան մինչեւ 330 Ն. Ք. յորժամ Մեծն Աղեքսանդր տիրապետց Պարսկաստանի, Աղեքսանդրի մահէն վերջ իւր

իշխանութեան բաժանման ատեն Պաղեստին ինկաւ
Պաղօմէսսի և հաստատուեցաւ իւր յաջորդներուն
ձեռամբ երբ մէկ դար։ Շուրջ 200 ին (Ն. Ք.) Սիւ-
րիոյ Մեծն Անտիոքոս իւր տիրապետութեան միա-
կըցեց զայն . բայց նախ քան զՔրիստոս 143 ին
վերստացաւ իւր առաջին դիրքը Մագալեանց
տակ։ Հրէական կառավարութեան . 100 տարիէ
վերջ Հռովմայեցիք տարբեր կուսակցութեանց վէ-
ճերէն հրապարեալ միջնորդեցին իրենց իշխանու-
թիւնը և անոնցմէ Մեծն Հերովդէս գահը ելաւ
Ն. Ք. 44 ին . իւր մահէն յետոյ Յուդայ բաժինն
եղաւ անոր որդւոյն Արքիղայոսի , սակայն նորա
աքսորէն վերջը հաստատուեցաւ այն Հռովմէական
փոխանորդաց իշխանութեան տակ՝ որոց ամենէն
նշանաւորն է Պոնտացի Պիղատոս առ որոյ իշխա-
նութեամբ խաչազոհ եղաւ Փրկիչն մեր Յիսուս ·
Հրէց հանդարտութենէն պատեհութիւն դանելով
Վեսփանեանք յամի Տեառն 67 ին երկիրը մտան
բանակաւ մը և 70 ին (Յ. Ք.) իւր որդին Տիտոս ,
Ելուսաղէմը քանդեց · Յուդայ հաստատուեցաւ
Հռովմայ ազդեցութեան տակ մինչև ի դարուն
սկիզբները՝ երբ որ Սարակեանք նուածեցին զայն
և տիրապետեցին անոր · Պաղեստին ԺԴ դարէն
մինչեւ ցայսօր հպատակ է Օսմանեան հզօր պե-
տութեան :

ՎԵՐՋ Ա. ՇՐՋԱՆԻ

ՑԱՆԿ ԱՆՈՒԱՆՅ Ա. ՇՐՋԱՆԻ

Ա.	
Աբարիմ	17
Ակրոն	18
Ազի Զոր	24
Ազի Ծով	37
Այեղն	26
Անդի-Լիբանան	10
Ապականութեան Լեռ	15
Առնոն	30
Ասղբաալոն	20
Աքովո	25
Բ	
Բասան	16
Բեթեսդա	36
Բոսոր	29
Բրուտին Արտը	23
Գ	
Գաաս	18, 31
Գարաոն	26
Գալիլիա	32
Գաղայոդ	16
Գարիղին	13
Գեհոն	35
Գեներէդ	33
Գորանթանա	15

	Ե	
Երաղ	13	
Երբայեցւոց Երկիր	6	
Եգիպտաս	31	
Ենդադդի	25	
Ենովմ	22	
Եսքող	24, 31	
Երիքով	20	
Եքեղա	18	
	Զ	
Զիփ	25	
	Է	
Էլմ	23	
	Թ	
Թափոր	12	
Թէկուէ	25	
Թովիէթ	22	
	Բ	
Իսրայելի Երկիր		
	Լ	
Լիբանան	10	
	Կ	
Կանա	29	
Կարմեզոս	11	
Կեղրոն	30	
Կիլազա	13	

	Հ	
Հերմոն	15	
	Զ	
Զիթենեաց Լեռ	14	
	Վ	
Վակեդուով	20	
Վակիելա (Ա. Ջ. Բ.)	24	
Վահրմէ	23	
Վասն	25	
Վեռեալ Ծով	33	
Վեռոն	32	
Վովլաբ	20	
Վօրէ	21	
Վօրէայ	18	
	Ց	
Ցաբբուկ	30	
Ցակորայ Զրհորն	35	
Ցեղոյէլ	9, 20	
Ցովսաբաթ	25	
Ցորդանսն	9, 19, 27	
Ցուուայ	24	
	Ւ	
Սերով	17	
	Ո	
Ուխտի Երկիր	5	
	Պ	
Պաղեստին	6	
Պէյթիթիւդ	11	

Ա.	
Առափամ	23
Ա.	
Աավան	22
Աարիօն	15
Աարօն	21
Աեփաթա	26
Աելովամ	36
Աէլմնն	17
Աէնիր	15
Աիդգիմ	26
Աիօն	18
Աողսմնն	36
Աովրէկ	31
Աուրբ երկիր	6
Բ.	
Տիբերիա	31
Բ.	
Բիմովի Վէմ	18
Փ.	
Փոզր (peor)	17
Ք.	
Քանան	5
Քերիդ	29
Քիսոն	28
Քիդրոն	22

ԹՐԱՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Էջմ	
Ա. Անուանք երկրին	5
Բ. Դիրք, սահման եւ տարածոթիւն	6
Գ. Երկրին ընդհանուր դիրքը	8
Դ. Լերինք	10
Ե. Դաշտեր եւ հովիտներ	19
Զ. Գետեր	26
Է. Լիճեր	31
Ը. Աւազաններ եւ աղբաւրներ	35
Թ. Կլիմայ հող եւ արտադրութիւնք	37
Ժ. Բնակչութեա	41
ՃԱ. Պատմական	44



ՀՀ Ազգային գրադարան



NL0028283

1449



ԹԻՇ ՕՐԵՆ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՂԱԿ

Երջանի Բ. — Երջանի Գ.



معارف عمومیه نظارت حلبیه سنک ۵ ذی الحجه ۱۳۴۳ و ۴ مایس
۳۱۲ تاریخی و ۱۵۰ یوروی رخصتنامه سیله طبع او لخشدز

1436